

Խարբերդ . Ա . Ս . Ն . — 1) Ձեր վերջընթեր նամակը պիտի հրա-
տարակուի : 2) Վերջի նամակով Ձեր խոստացած ասորերէն ձեռագիրն
հաճեցէք զրկել փութով : 3) Իրաւունք ունիք , Բարեկա՛մ . բայց եթէ
«հայերը չեն գիտեր գնահատել» , որուն համար Դուք «օտարագրի ըլլա-
լով հանգերձ» կը ցաւիք , մխիթարական է գոնէ տեսնել որ օտարագրի-
ներ գիտեն քաջալերել տրժանաւորը : Ինչպէս ցոյց կուտայ տեղական
ֆրանսերէն թերթէ մը քաղուած հետեւեալ հատուածը .

«Պարիսի Ասիական Ընկերութեան Ապրիլ 2ի նստին մէջ պ . Բար-
«քիէ դը Մէնար , արեւելագիտաց այս բազմահոյակ ակումբին արժանա-
«ւոր նախագահը , խօսք տուաւ պ . Յ . Հալէվիի որպէսզի ներկայացնէ
«նոր անդամ մը : Այս առթիւ պ . Հալէվի արտասանեց հետեւեալ ուղերձը .

«Պատիւ ունիմ Ընկերութեան անդամակցելու համար ներկայացը-
«նել ձեզ զպ . Կարապետ Յ . Բասմաջեան , նախկին աշակերտ Բարձր
«Ուսմանց Գործնական Վարժարանին : Պ . Բասմաջեան գովելի եռանդով
«եւ աշխուժով հետեւեցաւ անընդհատ երեք տարի իմ դասընթացքիս :
«Նշանակելի կերպով յառաջագիմեց եթովպական լեզուին մէջ , որ իմ դա-
«սախօսութեան գլխաւոր առարկայն կը կազմէ եւ որուն կը միանայ կա-
«սնորհաւորապէս սարէական կամ հիմնարական արձանագրութեանց ուսու-
«մըն հարաւային Արաբիոյ մէջ եղած վերջին գիւտերու համաձայն : Ան-
«խոնջ յարատեւութեամբ հետեւեցաւ միանգամայն տուրանեան լեզու-
«ներու բազմատական քերականութեան դասերուս . այս միջոցին մանրա-
«կրկիտ խնամով թարգմանած եւ վերլուծած եմ Օրխոնի եւ Յէնիսէյի
«թուրքերունական արձանագրութիւնները : Պ . Բասմաջեանի թուրքե-
«րէն լեզուի մէջ ունեցած խորին հմտութիւնը՝ այս դասախօսութիւննե-
«րուն շահեկան հանդամանք մը ընծայելու նպաստած են : Պայմանեալ
«ուսմանց օրինական ժամերէն դուրս՝ ամէն կիրակի իմ բնակարա-
«նիս մէջ ասուրաքաղտնեան արձանագրութիւններու բնագրաց ըն-
«թերցման եւ մեկնութեան ղինքն հմտացնելու հաճոյքը վայելցի : Այս
«մասին նաեւ պ . Բասմաջեան աշխատութեան սիրոյ եւ բանիմացու-
«թեան հազուադէպ ապացոյցը տուաւ : Ոչ նուազ գովելի է երիտասարդ
«գիտնականին Բանասէր պատմական եւ քննական հանդէսը զոր քանի
«մը տարիներէ ի վեր կը վարէ խիստ գծնդակ պարագաներու մէջ : Այս
«հաւաքածոն կը հրատարակէ հայկական հին գրականութեան նշխարնե-
«րը , ձեռագիրներ , արձանագրութիւններ եւ մասնաւորապէս նախաքե-
«մնեան ժամանակի վանեան արձանագրութիւններ : Եւ այս կարեւոր
«վաստակոց մէջ իր աշխատութեան ճշտապահութիւնն ու վերին աստի-
«ճանի խնամքը՝ արդիւնալից եւ բեղմնաւոր ըլլալ կը խոստանան գի-
«տութեան բարգաւաճման համար եւ կարժէ որ քաջալերուի : — Ահա ,
«Պարոններ , այս է թեկնածուն զոր պատիւ ունիմ ներկայացնել ձեր հա-
«ւանութեան քուէին : Պաշտօնակիցս պ . Մէյէ , որուն աշակերտած է պ .
«Բասմաջեան , բարեհաճեցաւ ինձ աջակցիլ Ընկերութեանդ յանձնարա-
«րելու համար զայն :

«Բազմահմուտ հայագէտն պ. Մէյէ իր կարգին խօսք առնելով աւելցուց հետեւեալը .

«Կը ձայնակցիմ պ. Հալէվիի, եւ՝ բաց աստի՝ կը վկայեմ պ. Բասմաջեանի նկարագրին ազնուութեան : Թէեւ նիւթականէ զուրկ՝ սակաւ լաւեր միջոցներով ստիպուած է իր ապրուստը հայթայթել , այսու «հանգերձ ա՛յնքան անշահախնդիր է եւ ա՛յնքան ջերմ փափագ կը տա «ծէ գիտութեան եւ իր ազգին բարգաւաճման որ միջոցը գտած է ոչ թէ «միայն ձեռք բերել պ. Հալէվիի ակնարկած. ընդարձակ ծանօթութիւն «ները՝ այլ եւ հիմնել, ապրեցնել Էւ առաջ տանիլ զուտ գիտական հան «գամանք կրող հանդէս մը . ուստի հարկ չկայ աւելին ըսել անոնց որ «գիտեն թէ նմանօրինակ ձեռնարկ մը ի՛նչ յարատեւութիւն եւ ճիգ կը «պահանջէ :

«Պ. Միքայէլ Թամամշեանց , պատկաւոր իրաւագիտութեան մէջ , «Ասիական Ընկերութեան միակ հայ անդամը , ջերմագին կերպով ոյժ առուաւ մեր պատուական պաշտօնակցին ընտրելութեան , եւ միաձայն «հաւանութեամբ պ. Կ. Բասմաջեան ընդունուեցաւ բազմահմուտ կաճաւ «ոռորդներու ծափահարութեանց մէջտեղ» :

ԽՄԲ.

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

Պարիսի Հայոց կողմէ Վենետիկ ղրկուած երկու պատգամաւորներու ճաւապարհածախուց համար եղած հանգանակութեան, ձեռամբ Արժ. Վ. քն. Բիպարեանի եւ Մեծ. Կ. Բէհլիվանեանի. — Մեծ. Տեարք Ա. Էգնաեան ֆր. 40, Յ. Իսկէնտէր 20, Յ. Ասլանկիւլ 20, Ս. Սվաճեան 20, Կ. Բէհլիվանեան 20, Թնկըր Եղբարք 20, Զօրահան Եղբարք 20, Տիրան Քէմհաճեան 10, Արամ Սեթեան 10, Սամուէլեան Եղբարք 10, Օտեան Եղբարք 10, Յ. Գէորգեան 10, Տիգրան խան Քէլէքեան 10, Մ. Մինասեան 5, Օ. Տողրամաճեան 5, Մ. Ոսկեան 5, Մ. Տէր Միքայէլեան 5, Ա. Զարիֆեան 5, Բ. Բուլճեան 5, Ն. Մանուկեան 5, Պ. Զուպուքճեան 5, Ալիք. Բուլճեան 5, Մ. Միհրդատեանց 5, Ս. Աչճեան 5, Ա. Բ. Գ. 5, Տօք. Պ. Սերովբեան 5, Ոմն 5, Ոմն 5, Ս. Սիոսեան 3, Տ. Գալբաքճեան 2 50 սնտ., Մ. Ալիքսանեան 2 50, Հ. Մարկոսեան 2 50, Հ. Ճեվահիրճեան 2 50, Ճէլալեան 2 50, Ե. Քըպեան 2 50, Գ. Փիւսկիւլեան 2 50, Ս. Յակոբեան 2 50, Ոմն 2 50, Ոմն 2 50, Ոմն 2 50, Գ. Նատիկեար 2, Գրիգոր Քէթնէճեան 2, Ոմն 2, Վ. Վրդանէս 1=Գումար 332 ֆր. 50 սնտ. :

— — —

Մեծ. Մ. Յովհաննէսեանի «Քննական պտմ. ԺԺ. դարու հայ դըպրութեան» գիրքը ղրկած ենք միայն «Բանասէր»ի այն բաժանօրդներուն որոնք կանխիկ վճարած են իրենց բաժնեգրինը :

ԽՄԲ.